Հաստատում եմ՝

Հրազդանի թիվ 8հիմնական դպրոց

----------Գ.Գրիգորյան

«31»_____03_____2023թ.

ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2023-2024 ուսումնական տարի

Գեղագիտական և ռազմահայրենասիրական

առարկայական

մասնախմբի աշխատանքային

պլան

Նախագահ՝ Լ.Աբրահամյան

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խորությամբ ուսումնասիրել «Կրթության մասին» օրենքը, պետական կրթական նոր չափորոշիչները, ծրագրերը, դասագրքերը, մեթոդական ձեռնարկները, գնահատման չափանիշները:

2023-2024 ուստարվա աշխատանքները կազմակերպել դպրոցական տարեկան աշխատանքային պլանի համապատասխան:

Մանկավարժական առաջավոր փորձի ընդհանրացում, ավանդական և նոր մեթոդների ստեղծագործական համադրում:

1.Փոխադարձ դասալսումներ:

ա - մեթոդական օգնություն ցույց տալ ուսուցիչներին

բ - ապահովել նոր մեթոդների կիրառումը

գ - ստուգել սովորողների գիտելիքների որակը

1. Ուսուցչիը սովորողներին ապահովի տարրական այնպիսի գիտելիքներով ու հմտություններով,որոնք հետագայում ուսումը շարունակողների համար հիմք կծառայեն տարբեր արհեստների տիրապետելու գործընթացում:
2. Կիրառել գնահատման տարբեր ձևերը՝միավորային և ուսուցանող:
3. Ակտիվ մասնակցել դպրոցական և համաքաղաքային միջոցառումներին, անցկացնել առարկայական շաբաթներ, գրական ցերեկույթներ, հոբելյանական օրեր, քննարկումներ, բանավեճեր:
4. Կազմակերպել առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ, ձևավորել կաբինետները և նոր ստենդներ:
5. Հնարավորինս հասնել և նպաստել այնպիսի անձի ձևավորմանը, որը գիտի և հասկանում է տարբեր ժողովուրդների լեզվի ու մշակույթի առանձնահատկությունները և նրանց քաղաքակրթական հիմքերի տարբերությունները:
6. Ճկուն, մտածող, ստեղծագործ և հանդուրժողական անձի ձևավորում:

Ազգային երգ ու պարը հասանելի դարձնել յուրաքանչյուր հայ աշակերտի համար:

7. Գեղարվեստական կրթության և գեղարվեստական դաստիարակության միջոցով ապահովել աշակերտների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները:
8. Սովորողների գիտելիքների որակը համապատասխանեցնել պետական չափորոշիչներին ու նորմաներին:
9. Հայտնաբերել մտավոր օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքների:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Նշումներ կատարման մասին
1.	Բոլոր ուսուցիչների համար պարտադիր դարձնել համակարգչային գիտելիքների կատարելագործումը և այդ գիտելիքների կիրառումը դասապրոցեսին և ընդհանրապես ամբողջ գործնեության մեջ: Անհրաժեշտություն դարձնել դպրոցի բոլոր ուսուցիչների կողմից համակարգչի,ինչպես նաև այլ տեխմիջոցների, սոցիարթակների հնարավորություններից արդյունավետ և նպատակային օգտվելը, հեռավար ուսուցման կազմակերպման մեթոդներին և միջոցներին տիրապետելը:	Ուստարվա ընթացքում	
2.	Ապահովել մասնախմբի անդամների մասնակցությունը վերապատրաստման ու վերառրակավորմանը ուղղված դասընթացներին,սեմինարներին:	Ուստարվա ընթացքում	
3.	Հանրակրթության մասին օրենքի ուսումնասիրում:	Սեպտենբեր	
4.	Մասնախմբում քննարկել և ամբողջական տեքստի բերել 2023-2024 ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:	25.08-31.08.2023	
5.	2023-2024 ուստարվա թեմատիկ ծրագրերի կազմում և հաստատում:	Սեպտենբեր	
6.	Ճիշտ ընկալել հիմնական դպրոցի կարևորությունը և կատարել նրա առջև դրված պահանջները: Հնարավորինս արդունավետ դարձնել իրականացնել ներառական կրթությունը լուծելով նրա հետ կապված խնդիրները՝ ուսուցիչների վերապատրաստում, միջավայրի ապահովում:	ՈԻստարվա ընթացքում	
7.	Դասավանդման որակի և սովորողների գիտելիքների ուսումնասիրում:Փոխադարձ դասալսումնր:	ՈԻստարվա ընթացքում	
8.	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության,ՀՀ ԿԳՄՍ նախարարության որոշումներին, նորմատիվ փաստաթղթերին:Նպաստել կրթության ոլորտում կատարվող փոփոխություններին իրազեկմանը:	ՈԻստարվա ընթացքում	
9.	Օգնել սովորողներին ճանաչելու ինքն իրեն, իր հայրենիքը,իր ժողովրդին, նրա ստեղծած հոգևոր և նյութական արժեքները:	ՈԻստարվա ընթացքում	
10.	Բարձրացնել արտադասարանական խմբակների աշխատանքների արդյունավետությունը:	ՈԻստարվա ընթացքում	
11.	Ծնողների համար կազմակերպել հաճելի ժամանց դպրոցի երգչախմբի և« Ազգային երգ ու պար»	ՈԻստարվա ընթացքում	

	առարկայի մասնակցությամբ:		
12.	Անցկացնել մրցույթներ,կազմակերպել ցուցահանդեսներ, առարկայական շաբաթներ,օլիմպիադաներ, միջոցառումներ:	ՈՒստարվա ընթացքում	
13.	Գեղագիտական կրթության և գեղարվեստական դաստիարակության միջոցով ապահովել աշակերտների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները:	ՈՒստարվա ընթացքում	
14.	Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հարստացնել մարզական գույքով:	ՈՒստարվա ընթացքում	
15.	Երաժշտական մտածողության զարգացման նպատակներով անցկացնել բաց դասեր 3-7-րդ դասարաններում:	ՈՒստարվա ընթացքում	
16.	Պարբերաբար ստուգել ուսուցիչների պատրաստվածությունը դասերին և գործնական աշխատանքների կատարման վիճակը:	ՈՒստարվա ընթացքում	
17.	Զեկուցումներ:ՈՒսուցիչների անհատական մեթոդական թեմաները:Մեթոդական նորությունների ուսումնասիրություն:	ՈՒստարվա ընթացքում	
18.	Կերպարվեստ, տեխնոլոգիա, երաժշտություն, ազգային երգ ու պար առարկաների համար կահավորել առանձին դասասենյակներ, իրենց նյութերու պարագաներով և գործիքներով:	ՈՒստարվա ընթացքում	
19.	Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզային նորմատիվների հանձնում և անցկացնել սպոտլանդիա:	ՈՒստարվա ընթացքում	
20.	Ծողներին մաասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակության բարելավմանը նպաաստող միջոցառումներին:	ՈՒստարվա ընթացքում	
21.	Կազմակերպել սպորտային միջոցառումներ նվիրված Անկախության օրվան:	ՈՒստարվա ընթացքում	
22.	Տոնական և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում,պատի թերթերի և ստենդների լուսընծայում:	ՈՒստարվա ընթացքում	
23.	Անցկացնել«Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում» միջոցառում:	ՈՒստարվա ընթացքում	
24.	«Դպրոցը մեր տունն է, նրա ունեցվածքը մեր սեփականությունը» թեմայով միջոցառումների և զրույցների կազմակերպում:	ՈՒստարվա ընթացքում	
25.	Ընդլայնել ուսուցիչների, աշակերտների մասնակցությունը համայնքային, մարզային, հանրապետական մրցույթներին, միջոցառումներին:	ՈՒստարվա ընթացքում	
26	«Dasaran.am.» ծրագրի շրջանակներում հայտարարվող մրցույթների կազմակերպում և անցկացում:	ՈՒստարվա ընթացքում	
27	Հասնել նրան,որ յուրաքանչյուր աշակերտ զգա,որ	ՈՒստարվա	

	ինքը ոչ միայն հայրենիքի, այլ նաև հայոց բանակի մի մասնիկն է,մի կաթիլը:	ընթացքում	
28.	Ապահովել 9-րդ դասարանի աշակերտների ՀՀ «Զինապարտության մասին» օրենքի հիմնական դրույթների և զինվորի երդման պարտադիր իմացությունը նպաստել, որ դպրոցի յուրաքանչյուր աշակերտ իմանա պետական օրհներգը ճանաչի հայոց դրոշը, զինանշանը:	ՈՒստարվա ընթացքում	
29.	«Տեխնոլոգիա» առարկային ինտեգրել «Զեռնարկատիրական կրթություն» բաղադրիչը՝ ուսման արդյունավետությունը բարձրացնելու համար:	ՈՒստարվա ընթացքում	
30.	Ապահովել ուսուցիչների ընդգրկվածությունը վերապատրաստման, վերառրակավորման դասընթացներին ըստ պահանջի: Նպաստել ուսուցիչների ատեստավորման գործընթացին:	ՈՒստարվա ընթացքում	

ներածություն

Մասնախմբի բոլոր ուսուցիչները կազմել են թեմատիկ պլանները համապատասխան պետական ծրագրերին և չափորոշիչներին, աշխատանքները կազմակերպվել են համաձայն այդ պլանների: Մասնագիտական խմբի աշխատանքային պլանը ժամանակին ներկայացրել ենք փոխտնօրենի հաստատմանն ու տնօրենի վավերացմանը: Մասնախմբի բոլոր ուսուցիչների մոտ ծրագրերի կատարողականությունը նորմալ է, իսկ որոշ դասարաններում թեմատիկ պլաններում կատարվել է մասնակի փոփոխություններ տոների պատճառով :

2022-2023 ուսումնական տարում ուսուցիչներ՝ Ա.Իսրայելյանը Հ. Զոհրաբյանը, Լ.Աբրահամյանը, Ա. Եփրեմյանը մասնակցել են հերթական վերապատրաստման դասընթացին և ստացել վկայական :

Ա.Ծատուրյանի, Ա.Եփրեմյանի, Մ.Սաֆարյանի ղեկավարությամբ «ՀՀ Կոտայքի մարզպետի գավաթ» խաղուղավազքի (2կմ) առաջնությանը մասնակցել է մեր դպրոցի թիմը: Արմինե Վարդանյանը 2կմ խաղուղավազքում գրավել 2-րդ տեղը, պարգևատրվել մեդալով և դրամական պարգևով:Դպրոցի թիմը պարգևատրվել է ՀՀ Կոտայքի մարզպետի պատվոգրով և գավաթով:

«Հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների սպարտակիադա» հնգամարտի մարզական միջոցառմանը մեր դպրոցի աշակերտները գրավել են 2-րդ տեղ: Դպրոցի աշակերտներ՝Նորայր Գրիգորյանը.Նելլի Գրիգորյանը ընդգրկվել են ՀՀ Կոտայքի մարզի թիմ հնգամարտի մարզական միջոցառմանը մասնակցելու համար:

Դպրոցի սաները մասնակցել են Կոտայքի մարզի դպրոցականների Մ-12տ տարեկան աղջիկների ֆուտբոլի մրցաշարին: Դպրոցի թիմը գեղեցիկ հաղթանակ է տարել և նվաճել հանրապետական փուլի ուղեգիր:

Դպրոցի թիմը՝ՀՀ դպրոցականների շախմատի 17-րդ օլիմպիադայի տարածքային.մարզային փուլերում գրավել է 1-ի տեղը և վաստակել հանրապետական փուլին մասնակցելու իրավունք:

Հ. Զոհրաբյանը հանդես է եկել մեթոդական զեկուցումով՝«Ինչպես սովորողի մոտ ձևավորել ազգային արժեքները,ազգային երգ ու պար, երաժշտություն առարկաների դասավանդման ընթացքում» խորագրով: Երաժշտություն առարկայից 5-6-րդ դասարաններում տնօրինության կողմից տրվել են գրավոր աշխատանքներ տեսական գիտելիքները ստուգելու համար և արդյունքները բավականին լավ է:

Կազմակերպել է ամփոփիչ դաս-միջոցառում 7-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ «Կոմիտաս» թեմայով: «Յուրաքանչյու բանաստեղծություն ունի իր գույնը» դաս-միջոցառում մայրիկների տոնին նվիրված, 5գ-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ:

Երևանի մանկական ֆիլարմոնիկի դահլիճում կայացել է ամենամյա մրցույթ փառատոնը՝«Ոսկե սրինգ», որին մասնակցել է նաև մեր դպրոցի աշակերտներ՝Գասպարյան Սերյոժա,Մարգարյան Սոֆի,Բաղրամյան Նարե և ցուցաբերել լավ արդյունք:

Դպրոցում Հ.Զոհրաբյանի ղեկավարությամբ գեղեցիկ նշվեց «Տյառնընդառաջ»,«Համբարձման տոնը»:Եվ տոնը շարունակվել է Հրազդան քաղաքի յոթերորդ և եկրորդ գրադարանում: Ուսումնական տարվա վերջում դաս-միջոցառում է կազմակերպել «Ազգային երգ ու պար» առարկայից բոլոր 5-6-րդ դասարաններում:

Ա.Իսրայելյանը հանդես է եկել մեթոդական զեկուցումով՝«Ի՞նչ է բուլինգը» խորագրով: Դպրոցում կայացել է նախարարության և ազգային պատկերասրահի կողմից կազմակերպված «Դաս արվեստ, բեմանկարչություն արվեստ» ուսուցողական և ճանաչողական միջոցառում, որին մասնակցել է դպրոցի նկարչական ձիրք ունեցող 30-ից ավելի աշակերտներ: Բոլոր աշակերտները Հայաստանի ազգային պատկերասրահի կողմից ստացել են նվերներ:
Կազմակերպել է անհատական ցուցահանդես՝«Գույների իմ աշխարհը» խորագրով 5ա-րդ դասարանի աշակերտուհի՝ Միլենա Ավետիսյանի աշխատանքներով:Կազմակերպել է ցուցահանդեսներ՝«Առաջին ձյունը իմ քաղաքի», «Աշունը առանց մեկնաբանությունների...»,«Իմ ժողովրդի հաղթանակները» խորագրերով, միջին դասարանի աշակերտների մասնակցությամբ: ՈՒսումնական տարվա ընթացքում կազմակերպել է շրջիկ ցուցահանդեսներ բոլոր 7-րդ դասարաններում: ՈՒսումնական տարվա վերջում 5-րդ դասարաններում «Տեխնոլոգիա» առարկայից փայտից պատրաստել են տարբեր աշխատանքներ և ցուցադրվել դասասենյակներում :
Զ.Հարությունյանի ղեկավարությամբ դպրոցի թիմը մասնակցել է ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզի պատանի հրշեջ-փրկարարական մարզաձևի առաջնությանը և գրավել 1-ին տեղը:
Տնօրեն՝Գ.Գրիգորյանի. Զ.Հարությունյանի ղեկավարությամբ ՆԳ նախարարության. ԱԾ Կոտայքի ՄՓՎ Հրազդանի հրշեջ ջոկատի կողմից անցկացվել է ուսումնական վարժանք և դասախոսություն «Երկրաշարժ» թեմայով:
Լ.Աբրահամյանի ղեկավարությամբ ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել է մրցույթ 6-րդ դասարան՝ «Հայկական ասեղնագործություն»,7-րդ դասարան՝«Հայկական կարպետ»,5-րդ դասարան «Էլեկտրատեխնիկա» թեմաներով, դասարանների աշակերտների միջև: Լավագույն աշխատանքները Լ.Աբրահամյանի և Ս.Ղուշչյանի կողմի խրախուսվել են նվերներով: ՈՒսումնական տարվա ընթացքում Ս.Ղուշչյանը հաճախակի կազմակերպել է էքսկուրսիա Հրազդան քաղաքում գործող մեխանիկական արտադրամասեր: Մասնագիտության ընտրությունը, դասը և գործնական աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու համար:
Մասնախմբի ուսուցիչները ուսումնական տարվա վերջում մասնակցել են՝ «Հանրապետության հանրակրթական դպրոցների 2-րդ,7-րդ, և 10-րդ դասարանների Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի համապատասխան տնօրենների և ուսուցիչների վերապատրաստում և մենթորների կողմից աջակցության իրականացում» դասընթացին:
2022-2023 ուսումնական տարվա գեղագիտական և ռազմահայրենասիրական մասնագիտական խմբի աշխատանքը կարելի է գնահատել լավ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՄՆԱԽՄԲԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N	Ազգանուն, անուն	Առարկան	Ծննդյան տարեթիվ	Կրթություն	Դասարաններ	Ժամերի քանակը	Ստաժ	Խմբակ	Վերապատ. դասընթացների մասնակցություն	Մանկ. խորհրդի անդամ
1	Իսրայելյան Արշալույս	Կերպարվեստ	1962	Բարձրագույն	2ա,բ,գ,3,ա,բ,գ,դ4ա,բ,գ,5ա,բ,գ,դ,6ա,բ,գ,դ,7ա,բ,գ,դ	20,5	38		+	այո
2	Եփրեմյան Աքիլլես	Ֆիզկուլտուրա	1956	Բարձրագույն	1գ,2ա,3ա,բ,4ա,5ա,բ,6ա,բ,գ	24	40		+	այո
3	Հարությունյան Զորիկ	Ն.Զ.Պ.	1959	Բարձրագույն	8ա,բ,գ,դ9ա,բ,գ,դ	8	24		+	այո
4	Ղուշչյան Սիրակ	Տեխնոլոգիա	1957	Բարձրագույն	6աբ,գ5ա,բ,գ,դ,	11	26		+	այո
5	Աբրահամյան Լուիզա	Տեխնոլոգիա	1967	Բարձրագույն	3ա,բ,գ,դ4ա,բ,գ5ա,բ,գ,դ,6ա,բ,գ,	18	36		+	այո
6	Զոհրաբյան Համեստ	Երաժշտություն	1980	Բարձրագույն	4ա,բ,գ5ա,բ,գ,դ6ա,բ,գ,դ,7ա,բ,գ,դ	9	22		+	այո
7	Սաֆարյան Միքայել	Ֆիզկուլտուրա	1993	Բարձրագույն	1ա,բ,3ա,բ,5գ,9ա,բ,գ	25	5		+	այո
8	Զոհրաբյան Համեստ	Ազգային երգ և պար	1980	Բարձրագույն	5ա,բ,գ,դ6ա,բ,գ,դ,7ա,բ,գ,դ	16	22		+	այո
9	Իսրայելյան Արշալույս	Տեխնոլոգիա	1962	Բարձրագույն		-	38		+	այո
10	Ծատուրյան Արմեն	Ֆիզկուլտուրա	1973	Բարձրագույն	3դ,3գ4գ,5դ,7ա,բ,գ,դ,8ա,բ,գ,դ,9դ	26	13		+	այո

ՆԻՍՏԵՐ

ՆԻՍՏ 1

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1. 2.	Ծրագրային նյութերի փոփոխությունների, գնահատման կարգի,մեթոդական նամակների,ուղեցույցների հետ ծանոթացում և քննարկում: Առարկայական մասնախմբերում քննարկել և ամբողջական տեքստի բերել մասնախմբի 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:	Օգոստոս

ՆԻՍՏ 2

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1. 1. 3.	Թեմատիկ աշխատանքային պլանների քննարկում,երաշխավորում և հաստատում:Թեմատիկ պլանների ներառում էլ. մատյան: Անկախության օրվան նվիրված ռամահայրենասիրական և սպորտային բնույթի բացօթյա փոքրիկ միջոցառումներ: Ընթացիկ հարցեր:	Սեպտեմբեր

ՆԻՍՏ 3

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1. 2. 3.	«ՈՒսուցի՛չ,դու ես կերտում ապագան» խորագրով միջոցառումներ նվիրված ուսուցչի օրվան: Կազմակերպել ցուցահանդես «Ի՛մ քաղաքի աշունը.....» խորագրով: Ընթացիկ հարցեր:	Հոկտեմբեր

ՆԻՍ 4

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1. 2. 3.	Հումանիտար և գեղագիտական առարկայական մասնախմբի անդամների հետ «Գեղագիտական իմացությունը վեր է ամեն ինչից» թեմայով սեմինար: Կազմակերպել ցուցահանդես «Դիմանկար» խորագրով, միջին դասարանի աշակերտների մասնակցությամբ: Մեթոդական զեկուցում:	Նոյեմբեր

ՆԻՍ 5

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1. 2. 3.	Երաժշտաստեղծ մտածողության զարգացման նպատակով անցկացնել բաց դաս5-6-րդ դասարաններում:Ազգային երգ և պար առարկայից: «Նոր տարի խաղաղություն թո՛ղ բերի» ամանորյա միջոցառումներ : Մեթոդական զեկուցում:	Դեկտեմբեր

ՆԻՍ 6

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1. 2. 3.	«Ձինվո՛ր ,դու ես խաղաղության մեր երաշխիքը» հայկական բանակի օրվան նվիրված միջոցառումներ: Գործնական աշխատանքների վարման վիճակի ստուգման ամփոփում: Ընթացիկ հարցեր:	Հունվար

ՆԻՍ 7

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1. 2. 3	Կազմաերպել միջոցառում «Մեր բանակը մեր տունն է» խորագրով: Մասնախմբերի ղեկավարների օգնությամբ ուսումնասիրել «Ֆիզկուլտուրա» առարկայի դասավանդման վիճակը 1-5-րդ դասարաններում: Մեթոդական զեկուցում:	Փետրվար

ՆԻՍ 8

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	«Քաղպաշտպանությունը դպրոցում» խորագրով միջոցառում:	Մարտ
2.	«Յուրաքանչյուր բանաստեղծություն ունի իր գույնը» գրական-նկարչական մրցույթ:	
3.	Ընթացիկ հարցեր	

ՆԻՍ 9

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Մասնախմբերի ղեկավարների օգնությամբ ուսումնասիրել ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման վիճակը 2-4-րդ դասարաններում:	Ապրիլ
2.	Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցին նվիրված կազմակերպել միջոցառում,ցուցահացդես և ամփոփել:	

ՆԻՍ 10

N	Բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Կազմակերպել երաժշտական միջոցառումներ մայիսյան հաղթանակներին նվիրված:	Մայիս
2.	Ընթացիկ հարցեր	
3.	Մեթոդմիավորման աշխատանքների ամփոփիչ հաշվետվություն 2023-2024ուսումնական տարվա:	